

Ի Յովհաննէ գաս մըկըրտիլ դու այսօր ,  
 Ի ծառայէ անժամանակ ծընունդ հօր .  
 Վետն ի տեսիլ քո աւասիկ Յորդանան  
     կայ զարհուրեալ, ոչ եւս ալիքն ընթանան,  
     Յետոս ըզկոհակս իւր ամփոխեալ փըրփրադէզ,  
     Յինքն ընդունել պատկառանօք զարքայն հեզ .  
 Եւ Կարապետըն զարհուրեալ Յովհաննէս ,  
     Ես մըկըրտիչ, աղաղակէր, եղէց քեզ : . . .  
 Այս, այս, քաջալերեաց, դու լիցիս ,  
     Դու որ ըզխրացսըն լուծանել հրաժարիս .  
 Ի ի բուժել զայսոյն հարուած կարեվէր,  
     Վայ մըկըրտիլ խոնարհաբար վասըն մեր :  
 Որոտալով անդ ի վերուստ սաստկապէս ,  
     Փեռեկեցաւ երկին փայլեալ բոցատես .  
 Հոսանք լուսոյ զեղան անտի ուղիսօրէն ,  
     Բարբառ հընչեաց յաստեղազարդ խորանէն .  
 Դա է որդի իմ սիրելի, եւ ընդ դա  
     Ես ի սկըզբանց յաւիտենից հաճեցայ :  
 Ի շնորհաբաշն արդ ի տօնիս պաղատիմ,  
     Ո՞ի ի շնորհաց քոց տէր զլանալ ըզծնողս իմ .  
 Ընորհեա նոցա գոլ եւ ի կեանս յայսոսիկ  
     Իստ մահացուացըս պայմանի երջանիկ .  
 Լացցեն, օն անդըր վաղահաս վիշտք ի բաց ,  
     Ո՞ի եւս անդրէն դըժխեմ բախտին լիցի դարձ .  
 Կեցջիք ծընողք իմ դուք, ծընողք պերճափայլ,  
     Յամն յոգնաթիւ կեցջիք յորդիս ձեր բերկրեալ .  
 Օսմար իցէ ձեզ ըստեսանել այսօր աստ  
     Եւ զսիրասուն որդիսդ երկուս յայս երաստ .  
 Այլ աւանիկ դարձեալ ընդ հուպ եւ նոքին  
     Ինդ հովանեաւ ինսամոց ձերոց ամրասցին .  
 Ընորհեա մեզ, Տէր, կեալ աստ յամայր ի միասին  
     Եւ զքեզ օրհնել անդ ի միմեանց անմեկին :

Ի ԱՊԽՆՈՒՄԻ 1848.

ՄՐԲԻԿ ԱՍՏՈՒԱԾՍՏՐԵԱՆ

### Լագորտէր :

Այս դարուս Գաղղիացւոց մատե-  
 նագրութեան քիչ կամշատ յառաջա-  
 դիմութեանը մէջ՝ ծաղկեալ մասերէն  
 մէկն ալ բեմական ձարտասանութիւնն  
 է : Բայց եթէ եղան քաջ քարոզիչներ  
 որ իրէնց նախնի հարց և հայրապետաց  
 աւանդը կենդանացուցին, Հայրն լա-  
 գորտէր կրնանք ըսել որ անոնց արժա-  
 նի նախանձորդ ըլլալէն վերջը, գաղ-

ղիական մատենագրութեան այս մասիս  
 նախնի պարծանքը և ևս աւելցուց՝  
 նոր տեսակ փայլ մը տալով . և եթէ  
 Հայրն Աւախնեան միայն իր Շշմարիտ  
 եռանդեամբն, հասարակաց համակրու-  
 թք և իմաստից օծութեամբը կրնայ  
 Լագորտէրի հետ մրցիլ, չկայ մէկը որ  
 յանդուգն տեսութեամբք, վսեմական  
 գաղափարներով, և շատ անգամ նո-  
 րանոր և հրաշալի բացատրութեամբք ,  
 կենդանի և յանկարծական շարժմունքը

ներով, խօսակցութեան բոցովնու փայլմամբ, երեակայութեամբն և միանգամայն բանաստեղծութեամբը կարենայ | ագորտէրի հաւասարիլ. և ահա այս է իր վարքը :

(Հովհաննէս-|)՝ կը . հենրիկոս | ագորտէր ծնաւ Գաղղիոյ լսկիափունք (Côte d'or) կոչուած Հարաւային-արելեան գաւառներէն մէկուն մէջ, 1802ին մայիսի 18<sup>ն</sup>: | անկութեան առաջին հասակէն որթ մնալով 'ի հօրէ, իրեք եղբարցն հետ ամենալաւ և ուղղափառական դաստիարակութիւն մը առաւ մօրէն: Տիժոնի լսարանին (Lyceé) մէջ 1810<sup>է</sup> ինչուան 1819 բոլոր ուսմանց ընթացքը կատարեց . բայց Տիժոնի մէջ վարժելուն ժամանակ, որինչ պէս յայտնի է, Պոսսիւէրի և | . Ինոնարդոսի հայրենիքն եղած է, անշուշտ | ագորտէրի մտքէն ալ չէր անցնէր որ որ մը ինքն ալ այս մեծանուն մարդկանց դասուն մէջ պիտի մտնէ: | առվուուն հայրենասիրութեամբ լցուած՝ աղէկիզմամբ կը գորովէր Գաղղիոյ թշուառութեանց և լիայսրութեան կործանմանը վրայ: Տանըեօթը տարուան, դարձեալ Տիժոնի մէջ սկսաւ Իրաւագիտութիւն սորուիլ, և երիտասարդ փաստաբաններու հետ ըրած վիճաբանութեանց մէջ յայտնի կ'երեցրնէր իր մեծ յարմարութիւնը: | յօրոր Իրաւագիտութեան ընթացքն ալ լմնցուց՝ Տարիզ եկաւ 1822ին, և սկսաւ յաջողութեամբ փաստաբանութիւն ընել: Ահա ասպարէզը մեծ էր՝ բայց | ագորտէրի աշխոյժը գոհ չեղաւ, և աւելի մեծ ընդարձակութիւն մը կը փնտընէր իր մտաց թեոցը: Ինութեան 'ի պատանեկութենէ յերիտասարդութիւն ըրած փոփոխութե ժամանակ հիւանդացաւ | ագորտէր, և առանց պատճափ մը կու լար ու կը հառաջէր Յագէր Յագի կարէտոր է Քրիստոնէութեան, և Թայն ինքն է որ իրնայ պահէլ զայն և կատարելագործել. ուրեն Քրիստոնէութեանը ճշմարտէ, և այն ոչ իբրև ճշմարտութեան քաղաքական՝ ինչպէս շատերը իւրաքանչին, այլ ասպատակային և գերագոյն ճշմարտութեան. և այլն: | յսպէս ուրեմն իր ընկերական հաւատքէն կաթուղիկէ հաւատքի դարձաւ, և | ագորտէրի միտքն առաջին քայլն ըրաւ:

րուն կարենայ ինքզինքը նուիրել. սէրն ամենայն զօրութեամբ կը զեղանի յայն պիսին: | յեռ ինչուան այն ատեն | օլդէրեան էր, բայց պէտք է գիտնալ որ ոչ եթէ սկեպտիկեան ու անտարթեր՝ այլաստուածեան, և զկարծած ժամանակն ալ մտածութիւնը պարզ ու որոշէր: | ւր ուրեմն | ագորտէր իր ազգատոհմին գլխաւոր ոգւոյն և յատկութեցը վրայ, որ է ծխարտասիրութիւն, ուղղախոհութիւն և հաստատութիւն մտաց՝ աւելցուց երիտասարդ, դալար ու թեղնաւոր սիրտ մը որ գեռ իր գանձը էր վատնած. մեծ կատարելութիւն և վառվուուն խօսակցութեան շունչ մը՝ որ իր օրը կը փնտընէր ու չէր գտնէր. և այսպէս ահա փաստաբանութեան իցին մէջ ներքին ալեկոծութեամբ կը ծփէր, երբ 1824ին աւելի մեծ խոսվութիւն մը զգալով իր վրայ՝ թողուց փաստաբանութիւնը, և 'ի ծածուկ | . Սուլպիկիոսի կղերիկոսարանը մտաւ:

| Եծ մարդկանց այսպիսի վիճակի փոփոխութիւնները ծիծաղելի և տղայական կ'երեան, բայց միշտ ներքին գրգուիչ յուզմունքներէ առաջ կու գան: | ատ ատենէ 'ի վեր | ագորտէր այս իմաստասիրական մտածութիւններս ունեցեր էր. | նէրութեանը հարեւոր է, կ'ըսէր. ևս առատել ընէրութեանն հարդարոր է Քրիստոնէութեան, և Թայն ինքն է որ իրնայ պահէլ զայն և կատարելագործել. ուրեն Քրիստոնէութեանը ճշմարտէ, և այն ոչ իբրև ճշմարտութեան քաղաքական՝ ինչպէս շատերը իւրաքանչին, այլ ասպատակային և գերագոյն ճշմարտութեան. և այլն: | յսպէս ուրեմն իր ընկերական հաւատքէն կաթուղիկէ հաւատքի դարձաւ, և | ագորտէրի միտքն առաջին քայլն ըրաւ:

| ատ ախորժ զգաց | ագորտէր երբ իր խաղաղութիւնը գտաւ, այն խաղաղութիւնը՝ որ աշխարհքէ նոր հրաժարեալ հոգի մը կղերիկոսարան մը առանձնանալու առջի օրերը նորէն երիտասարդանալու պէս կրնայ զգալ, երբ կը գտնէ ստուգապէս իր սրտին մանկութիւնը, իր պատանեկութեան տա-

ըիներուն քաղցրութիւնը, երբ կանոնաց խստութիւնը իրեն դժուարին լուծմը չերևնար, յորում ամենէն պարզ և ոչինչ բաները իր խղջին կարեոր կը սեպուին, յուսով քաղցր վարձուց։ Ավագինք հոս | ագորտէրի այս վիճակին մէջ ըրած գրաւոր բանաստեղծութիւններն ալ առաջ բերել, բայց ընթերցողաց ուշադրութիւնը աւելի կարեոր բանի մը վրայ գրաւել ուզելով՝ հարկ կը համարինք ըսել որ | ագորտէր իր այս նոր զգեստին տակ կենդանի պահեց ազատութեան սէրը որ ՚ի մանկութենէ յաշխարհի արմատացեալ էր իր սրտին մէջ, և ուզեց Վրիստոնէութեան կենսական ոգւոյն հետ լծորդել բոլոր կենացը մէջ։

Ի՞ս իր մտածութիւնը | ագորտէր մէկէն յայտնի ըրաւ հասարակաց երբ 1830<sup>ին</sup> | ամրնէի հետ ընկերանալով սկսաւ անոր Ի՞նակայ օրագրին մէջ յօդուածներ հրատարակել. բայց երբ | ամրնէի այս օրագրին ուրիշ կողմանէ անխոհեմ, յանդուցն և ազատական մրտածութիւնները տեսնելով հռովմայ | | . Դահը արգիլեց, | ագորտէր ամենայն անկեղծութք և միամտութեամբ սրտի հնագանդեցաւ. ուր ընդհակառակն | ամրնէ թէակետ և ինքն ալ հնազանդեցաւ՝ այլ կատաղութեամբ և անհամբեր հնազանդութեամբ մը որ երկար պիտի չտեսէր։

Ի՞սպէս ահա ինչուան իր երեսներորդ տարին հասաւ | ագորտէր և անդադար վիճակ մը ընտրելու փորձեր ընելով, գեռ իր ասպարէզը չէր գտած. վերջապէս, համախօսութիւք (Conférences) քարոզելով, և վառվուուն ոճովն իր նսրանոր մտածութիւն ամենաձիշդ բացատրելովը, միանգամայն գաղղիական իրենց հին հայրապետաց ձարտասանութեամբ մէծ գեղեցիկ զարդերն ալ մէկտեղ խառնելով՝ զամէնքը զարմացուց և բոլոր երիտասարդաց միտքն իրեն գրաւեց. և անանկ մեծ համարումն ու համբաւ ստացաւ իր այս առաջին քարոզատուութիւքը՝ որ յաջորդ տարին 1835<sup>ին</sup> Ի՞սպէզու արքեպիսկոպոսը Գէլան մասնաւոր

ինամքով մը զ | ագորտէր | ողբը-տամ եկեղեցւոյն քարոզիչ սահմանեց, որ Ի՞սպէզու առաջին բեմը կը սեպուի: | Այս միջոցին բոլորովին ըմբռնեց | ագորտէր որ այն՝ այսինքն սրբազն կամ բեմական ձարտասանութիւնն էր իր կոչումը. և նման այն թռչնոց որ որչափ աւելի ընդարձակ միջոցի մէջ գտնուին այնչափ աւելի ախորժ կը զգան, այսպէս ինքն ալ իրեն մեծ ասպարէզ մը գտնելով՝ շատ գոհ եղաւ: | Ի՞ր համախօսութիւնքը նոր ոձով մը առանձինն իր ժամանակին յարմարցուցած է, ուրուն պատճառը ինքն ալ կու տայ, ըսելով թէ “Պրովհետե մոլորութեան հին օձը իւրաքանչիւր գարուց արևուն իր գոյնը կը փոխէ՝ այսպէս ալ պէտք է որ մեր քարոզութիւնը, որ տգիտութեան պէս ինքն ալ ձարտար է, և մոլորութեան պէս խորամանկ, անօր փոփոխականութեանը նմանի, և հետզհետե նորագիւտ զէնքերով շշմարտութեան այն ամրացընէ,,,: Դարձեալ “ Ի՞ւելի կարեորն է, կ'ըսէ, ձանչնալ ու սիրել զիստուած, քան թէ ձարտասանութեան կանոնաց հետեիլ. թող | | . Պօզոսի հաւատքն ունենանք և յունարէն գէշ խօսինք,,,: և ըրած վարդապէտութիւնը ձիշդ պահելով, լողբը-տամի բեմին չորս բոլորը խոնած երիտասարդաց կը դառնայ ու կ'ըսէ “ Դուռտ որ գայթ ասոտանը ուսուուցեալ սրտիստ և իբրև զդադաւորս լսէլ զբանն Աստուծոյ,,,: Կարձես թէ գեռ այն երիտասարդ հասակէն կատարելապէս ձանչցած է իր գարը. “ Կիստուած, կ'ըսէ, իր կ'կեղեցւոյն սէր տուաւ, և զկայ սիրտ մը յորում եկեղեցին սիրով չիւափանցէ. վասն զի աշխարհիս թագաւորը թշուառութիւնն է, և շուտ կամ ուշ ամէն սիրտ անոր գաւազանովը կը հարուածի..: Կիսէ վերջը կրնար կ'կեղեցին. վատահութեամբ բոլոր աշխարհիս տիրել, վասն զի երկրիս վրայ ամէն տեղ անպակաս է արտասուքը. և այնպէս բնական է մեզի լալը՝ որ նաև առանց պատճառի անդադար արցունք կը թափէնք աջքերնէս, այն ախորժովն որ

որտմութիւնը մեզի կը բերէ , և որուն քաղտնի և խորին աղքիւրն է մեր սիրտը , : Ահաւասիկ լագորտէրի ձարտասանութիւնը լի է այսպիսի զգայուն մասերով , որով ունկնդրաց անկրօն մոտածութիւնները կը հանդարտեցընէ . մէկէն՝ ի մէկ զամէնքը դարձընելէն աւելի , կ'ուզէ նախ ցնցել լսողները և իրեն ըսածներուն վկայութիւն առնուլ անոնցմէ : Դարձեալ , ինչ ազգեցութիւն շնըներ այսպիսի յանկարծական վսեմ խօսքեր , երբ կը գոչէ լագորտէր “Ո՞՞ հարցանէք զընթացից գետոց և զուղղութենէ լերանց . երթայք յառաջ հանդէալ ձեր , երթայք իբրև զշանթիս այնմ որ զձեզն առաքէն , և որպէս երթայր բանն արարիչ որ կեանս ետ անդընդոց , և որպէս երթան արծիւք և հրեշտակը , : Կ'առնու կը տանի ուրեմն ունկնդիրները ’ի գագաթունս լերանց . կը դողայ , կը սարսափի ամենայն ոք , բայց ոչ երեկէ կ'իննայ : Խնքնին իսկ երեմն լագորտէր զարմացած իր յանդուգն խօսքերուն վրայ կը դառնայ կը մտածէ , բայց շուտ մը նորէն կրկնելն ու բացատրելը մէկ կ'ընէ . վասն զի սրտէն բխածը միշտ ուղիղ է և սուրբ , և նաև վառվուուն շրթունքներէն ալ անցնելով իր սրբութիւնը չկորսնցընէր :

Դայց այսչափ գովեստներէն վերջը այս ալ պէտք է խոստովանիլ որ երբ մէկը պաղ արիւնով լագորտէրի լրկեղեցւոյ և անոր կազմութեանը , անսխալութեը վրայ գրած համախօսութիւնքը կը կարդայ՝ կը տեսնէ որ լագորտէրի ձեռնարկութիւնքը շատ տկար են , որամաքանութեանը մէջ շատ պակաս միջոցներ ունի , որով իրեն պատճառաբանութեան շղթային օղակները տեղ տեղ ինկած են : Ըստ անգամ ալ աւելորդ բառերու խաղեր կ'ընէ . սահման մը կու տայ՝ և զայն փոխանակ լաւ մը բացատրութեամբ ցուցընելու , շուտ մը կը հաստատէ . ասոնք են ահա իր այս քարոզներուն պակասութիւնները : Բայց լագորտէր եթէ ջանար աս թերութիւններէս զգուշանալու , պատճառն այն է որ կը տեսնէ թէ նոյնպէս

ալ ըսածները աւելի կը հիացնեն և կը թափանցեն ունկնդրաց սրտին մէջ :

Լագորտէր երկու տարի իր քարոզութիւրը յաջողութեամբ լողը-տամի մէջ կատարելէն վերջը , յանկարծանանկ նորօրինակ բան մը ըրաւ՝ որ իր ամենէն կրօնասէր բարեկամացն ալ մտքին դէմ երեցաւ . թողուց իր բեմը և Դամինիկեան կրօնաւոր ըլլալու պատրատութեամբ հոռվլմ գնաց : Իրեն այս ըրածին պատճառը ուրիշ բան չէ բայց եթէ նախ որ լագորտէր ձարտասանութեանը պէս բնաւորութեանը մէջն ալ յանկարծական դարձուածքներ և յանդուգն թոփչներ ունի . և երկրորդ՝ վասն զի լողը-տամի բեմը հաստատուելուն պէս իմացաւ թէ ինչ աստիճան ժողովրդեան վրայ զօրութիւն կրնար ունենալ , իր միտքը դրած մէկ բարի գործքը կատարելու համար . և առաքինական վեհ փառասիրութեամբ մը , ինչպէս ինքն ալ կը խոստովանի , առաւ ելագունին փափաքելով , այսինքն աւելի շատ սիրտ և հոգի ստանալու եռանդեամբ , մտածեց որ բերնով իսսածներուն օգուտը մշտնջենաւոր օգտի վերածէ . և ասոր համար մարմին մը , որ է ըսել կրօն մը հարկաւոր սեպելով՝ Դամինիկեան կրօնն նորէն Դաղղիս մէջ վերանորոգել ուղեց . ասիկայ՝ ի սկզբան անդ նորօրինակ ձեռնարկ մըն էր , բայց առանց շատ դժուարութեան յաջողցուց լագորտէր . այս առթով զրեց նաև լլ . Դամինիկոսի վարքը՝ որ պատմութեան անստոյդ մասերէն դուրս , որոնց համար բաւական քննադատութեան տակ ինկած է , առհասարակ ամենէն իրեն առաջնին ընտիր գրուածքներէն մէկը կը սեպուի . իսկ ուշը՝ Ո՞իթին դարու վառվառուն մտաց փայլն է : Պապէս ահա 1841 ն , Փետրուարի 15 ն լագորտէր Դամինիկեանի ձերմակ ըզգեստով ու զլուխը գերծած նորէն լողը-տամի բեմին վրայ երեցաւ , և աւելի ընդունելութիւն գտաւ հետաքըրքիր ժողովրդենէն : Կաև ուրիշ քաղաքներ ալ քարոզելու գնաց լագորտէր , ինչպէս Պորտոյ , Կանարի , ի իոն ,

Կիրնոպլ և դեռ ուրիշ շատ քաղաքներ ,  
և ամէն տեղ միշտ զամէնքը զարմա-  
ցուց :

Լագորտէրի բեմերէն հնչեցուցած  
Ճարտասանութիւնը գովլելու ատեն՝  
պէտք չէ մոռնանք իրեն իրեք դամ-  
բանական ճառերն ալ , որ են առաջին  
Տ' Օքոնէլին , Երկրորդ՝ Անափի Դոր-  
պէն-Ղանսօն Եպիսկոպոսին , և Եր-  
րորդ՝ Տրույ զօրավարին վրայ խօսած-  
ները : Տրույ զօրավարին վրայինը՝ Ան-  
սի մայր Եկեղեցւոյն մէջ խօսած է ,  
1847ին Մայիսի 25ին . որ թէ պէտ Պոս-  
տիւէի՝ Վոնտէ զօրավարին վրայ խօսա-  
ծին անհամեմատ վսեմութեանը հետ  
չկրնար բաղդատուիլ , այլ ըստ Աէնդ-  
Պէօֆ քննաբանին քան զՓլէշիէի  
Դիւրէնի վրայ ըրած դամբանականը  
կը գերազանցէ : Խակ Վորպէն-Ղանսօ-  
նինը պարզ և Ճշմարտապատում ոճ մը  
ունի . Լագորտէր այս հոգելից և առա-  
քելանման հայրապետին վրայ խօսելու  
ատեն՝ շատ զգայուն և սրտաշարժ մա-  
սեր իր ճառին մէջ կ'ագուցանէ . և ա-  
ռանց գիտնալու , անոր առաքելութիւն  
և քարոզութիւն սիրող ոգին դուրս  
ցատկեցրնելուն միջոց՝ քանի մը մասամբ  
ինքինքը նկարագրած է :

Լագորտէրի Ճարտասանութեան աղ-  
բիւրներէն մէկն ալ է իրեն հայրենա-  
սիրութեան ոգին , յորում շատ կը Ճո-  
խանայ երբ Տրույ զօրավարը կը սկըսի  
գովլել . նոյնպէս նաև նոյն ճառին մէջ  
շատ ճարտար ու սրտաշարժ ոճով Տը-  
րուոյի տղայութեան մանրամասն պատ-  
մութիւնը կ'ընէ , ամենէն ընջն դէպ-  
քերն ալ գեղեցիկապէս նկարագրելով :

Ո Երջապէս կը կնքենք խօսքերնիս՝  
իմացընելով որ այս մօտերս Լագորտէր՝  
Դաոգըլիի տեղ Դաղղիոյ Ճշմարանին  
անդամ ընտրուեցաւ , և մուտքին այն  
մեծ հանդիսին օրը հասարակաց առջև  
առանձին գեղեցիկ ճառով մը իրեն նա-  
խորդին Դաոգըլիի գովեստն ըրաւ :

### Մատանի:

Ո ատանին , ինչպէս անունն ալ վրան  
է , օղակաձև մարմին մըն է որ իբրև  
զարդ , և կամարարողութեց հանդէսնե-  
րու մէջ մատերնիս կ'անցընենք : Ինչպէս  
Եպիսկոպոսաց մատանին իրենց հայրա-  
պէտական զարդերէն մէկն է , և իբրև  
առհաւատչեայ նշան իրենց Եկեղեցւոյ  
հետ հոգեւոր հարսանեօք կապուելուն :  
Եպիսկոպոսաց մատանի գործածելու  
սովորութիւնը շատ հին է . Դաուետոյի  
ժողովքը (633ին) կը կանոնադրէ որ  
Եպիսկոպոս մը ժողովքով դատապար-  
տուելէն վերջը , թէ Երկրորդ անգամ  
ուրիշ ժողովքով անմեղ որոշուի , նորէն  
իր առջի պատուոյն մէջ հաստատուի ,  
և մատանին ու գաւազանն ալնորէն ի-  
րեն դարձուի :

Ո ատանի գործածելը Եպիսկոպոսնե-  
րէն ծիրանաւորաց մէջ ալ մտաւ , որուն  
համար ստակի գումար մը պարտական  
են վճարելու , կան իրաւանց ծիրանաւ-  
բական մատանոյ :

Խակ մատանսոյն երբ սկսելուն գա-  
լով Պիինիոս կ'ըսէ , թէ առաջին գըտ-  
նողն ու գործածողը չփիտցուիր , և թէ  
իբրև առակ և առասպել պէտք է սե-  
պել Պրոմեթէոսի և Միդասայ պատ-  
մութիւնները :

Ընդհանուր ազգաց պատմութիւնը  
քննելով նախ և առաջ մատանսոյ գոր-  
ծածութիւնը Հրէից մէջ կը տեսնենք .  
վասն զի ահա Դաննդոց Լլ գլխոյն մէջ  
կը կարդանք , որ Յուդա՝ Յակոբ նա-  
հապետին որդին , Ամամարայ ըրած-  
խոստմանը իբրև գրաւական իր մատա-  
նին տուաւ : Դայց կ'երևայ թէ նոյն  
միջոցներուն Եգիպտացւոց մէջ ալ մտած  
էր մատանսոյ սովորութիւնը , որովհե-  
տեւ նոյնպէս Դաննդոց գրքին ԽՍ գըլ-  
խոյն մէջ Փարաւոն՝ Յավսեփայ ձեռքը  
մատանի մը դրաւ , իբրև իրեն տուած  
բացարձակ իշխանութեանը նշան : Մ-  
ուածին թագաւորութեանց մէջ ալ  
(Պա. Իւ. Յէղաբէլ՝ Աթբովթայ ըս-